ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

# ИСТОРИЯ И КУЛЬТУРА

## АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

# HISTORY AND CULTURE

## JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

*Խմբագրական խորհուրդ՝*

**Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

*Редакционная коллегия:*

**Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

*Editorial Board:*

**Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.).

**ISSN 1829-2771**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
# СОДЕРЖАНИЕ / CONTENT

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY


**Էդիկ Մինասյան** - ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ..... 6

**Эдик Минасян** - АРМЯНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ РА ... 26

**Edik Minasyan** - ARMENIAN-TURKISH RELATIONS DURING THE YEARS OF INDEPENDENCE OF THE RA ..... 28

**Էդուարդ Զոհրաբյան** - ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1930-1980-ԱԿԱՆ ԹԹ. ..... 31

**Эдуард Зограбян** - ПРОЦЕСС ИДЕОЛОГИЧЕСКОЙ ТРАНСФОРМАЦИИ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ С 1930 ПО 1980-ЫЕ ГОДЫ ..... 39

**Eduard Zohrabyan** - THE PROCESS OF IDEOLOGICAL TNANSFORMATION OF SOCIIETY IN Soviet Armenia in 1930-1980 ..... 39

**Ֆելիքս Մովսիսյան** - ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ 1840-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԼԱՆԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ ..... 40

**Феликс Мовсисян** - АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННАЯ МЫСЛЬ ОБ ИРЛАНДСКОМ НАЦИОНАЛЬНОМ ДВИЖЕНИИ 1840-Х ГОДОВ ..... 57

**Feliks Movsisyan** - ARMENIAN PUBLIC OPINION ON THE IRISH NATIONAL MOVEMENT OF THE 1840s ..... 57

**Валерий Тунян** - ПОБОРНИКИ ОТРИЦАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН ..... 59

**Վալերի Թունյան** - ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՁԱՏԱԳՈՎՆԵՐԸ ..... 64

**Valery Tunyan** - DEFENDERS OF THE DENIAL OF THE ARMENIAN GENOCIDE ..... 64

**Վանիկ Վիրաբյան** - ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՏԱՆՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ ..... 65

**Ваник Вирабян** - МЕЖЭТНИЧЕСКИЕ СОБЫТИЯ И АНТАНТОВСКИЕ ГОСУДАРСТВА В ЗАКАВКАЗЬЕ ПОСЛЕ ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ 1917 ГОДА ..... 82

**Vanik Virabyan** - INTERETHNIC DEVELOPMENTS AND THE ENTENTE STATES IN TRANSCAUCASIA AFTER THE OCTOBER 1917 REVOLUTION ..... 82

**Սարգիս Գրիգորյան** – ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ..... 84

**Саргис Григорян** - АКТИВНОСТЬ АЗЕРБАЙДЖАНСКИХ ИСЛАМИСТОВ НА КАВКАЗЕ И БЛИЖНЕМ ВОСТОКЕ ..... 91

**Sargis Grigoryan** – ACTIVITY OF AZERBAIJANI ISLAMISTS IN THE CAUCASUS AND IN THE MIDDLE EAST ..... 92

**Նառա Սարգսյան** - ՀԱՄԻԴՅԱՆ ՁԱՐԴԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ «ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ» ՎԻՊԱԿՈՒՄ ..... 93

**Нара Саргсян** – ОТРАЖЕНИЕ ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ ХАМИДИЙСКОЙ РЕЗНИ В ПРОИЗВЕДЕНИИ АРПИАР АРПИАРЯНА “БАГРОВОЕ ПРИНОШЕНИЕ” ..... 101

**Nara Sargsyan** – THE REFLECTION OF PSYCHOLOGICAL INFLUENCE OF HAMIDIAN MASSACARES IN ARPIAR ARPIARYAN'S NOVELETTE "THE CRIMSON OFFERING" ..... 101

**Էդգար Չախոյան** - Վրաստան-ԱՄՆ դիվանագիտական հարաբերությունները Միխեիլ Սաակաշվիլիի նախագահության առաջին շրջանում (2004-2007 թթ.) ..... 102

**Эдгар Чахоян** – ДИПЛОМАТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ ГРУЗИИ И США ПРИ ПЕРВОМ ПРЕЗИДЕНТСКОМ СРОКЕ МИХАИЛА СААКАШВИЛИ (2004-2007 гг.) ..... 112

**Edgar Chakhoyan** - DIPLOMATIC RELATIONS BETWEEN GEORGIA AND THE USA DURING THE FIRST PERIOD OF THE PRESIDENCY OF MIKHAIL SAAKASHVILI (2004-2007) ..... 113

**Арман Сафарян** – О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ КОНВЕРГЕНТНОЙ И МУЛЬТИМЕДИЙНОЙ ЖУРНАЛИСТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ ..... 114

**Արման Սաֆարյան** – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՐԳԵՆՏ և ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ..... 118

**Safaryan Arman** – ON SOME FEATURES OF CONVERGENT AND MULTIMEDIA JOURNALISM IN THE REPUBLIC OF ARMENIA ..... 118

**Անդրանիկ Եսայան** – ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVIII Դարի ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ ..... 119

**Андраник Есаян** – СИТУАЦИЯ В СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ 18 ВЕКА .....125

**Andranik Yesayan** – THE SITUATION IN NORTHEASTERN ARMENIA IN THE FIRST QUARTER OF THE 18-TH CENTURY ..... 126

**Տարոն Սաքոյան** - ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (2010-2016) ... 127

**Тарон Сакоян** - ИНТЕРЕСЫ И ПРОТИВОРЕЧИЯ ТУРЦИИ И РОССИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ В НОВЫХ ГЕОПОЛИТИЧЕСКИХ РЕАЛИЯХ (2010-2016) ..... 136

**Taron Sakoyan** - INTERESTS AND CONTRADICTIONS BETWEEN TURKEY AND RUSSIA IN THE SOUTH CAUCASUS IN NEW GEOPOLITICAL REALITIES (2010-2016) ..... 136

**Majid Karimi** - THE ETIMOLOGY AND ORIGINS OF THE NAME NAKHICHEVAN FROM THE HISTORICAL SOURCES ..... 137

**Մաջիդ Քարիմի** - ՆԱԽԻՋԵՎԱՆ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԾԱԳՈՒՄԸ ԸՍՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ..... 147

**Маджид Карими** - ЭТИМОЛОГИЯ И ПРОИСХОЖДЕНИЕ НАЗВАНИЯ НАХИДЖЕВАН ПО ИСТОРИЧЕСКИМ ИСТОЧНИКАМ ..... 147

**Օֆելյա Դարբինյան** - ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ..... 148

**Офелия Дарбинян** - ОСОБЕННОСТИ РЕПАРТАЦИИ ЛИВИНСКИХ АРМЯН, РЕЗУЛЬТАТЫ И ПОСЛЕДСТВИЯ (1946-1949 ГГ.) ..... 158

**Ofelya Darbinyan** - PECULIARITIES, RESULTS AND CONSEQUENCES OF THE REPATRIATION OF THE LEBANESE-ARMENIANS (1946-1949) ..... 158

**Արևշատ Մինասյան** - ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ..... 159

**Аревшат Минасян** - АРМЯНСКАЯ ОБЩИНА УРУГВАЯ ..... 164

**Arevshat Minasyan** - THE ARMENIAN COMMUNITY OF URUGUAY ..... 164

**Միքայել Միքայելյան** - ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՏԹԵՈՍ II ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ II-Ի ՀԵՏ ..... 166

**Микаел Микаелян** - ВСТРЕЧА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН МАТТЕОСА II ИЗМИРЛЯНА С РОССИЙСКИМ ИМПЕРАТОРОМ НИКОЛАЕМ II ..... 172

**Mikayel Mikayelyan** - MEETING OF CATHOLICOS OF ALL ARMENIANS MATTEOS II IZMIRLYAN WITH RUSSIAN EMPEROR NICHOLAS II ..... 172

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ** / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

**Սամվել Մկրտչյան** - ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ ..... 173

**Самвел Мкртчян** – ПРОЯВЛЕНИЕ ЭТНИЧЕСКОЙ ИДЕНТИЧНОСТИ И ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ В АРМЯНСКОЙ ПРАЗДНИЧНООБРЯДНОЙ КУЛЬТУРЕ .....178

**Samvel Mkrtchyan** - MANIFESTATIONS OF ETHNIC IDENTITY AND HISTORICAL MEMORY IN THE ARMENIAN FESTIVAL AND RITUAL CULTURE ..... 178

**ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ** / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

**Մերի Հովհաննիսյան** - ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 180

**Мери Оганнисян** - *ОСОБЕННОСТИ ПРОЕКТНОГО ОБУЧЕНИЯ* ..... 186

**Meri Hovhannisyan** - PECULIARITIES OF PROJECT-BASED LEARNING ..... 186

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆ ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ .. 188
ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՆԳՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ..... 190
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ..... 192

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

НА ПЕРЕКРЕСТКЕ ИСТОРИЧЕСКИХ И ЕСТЕСТВЕННЫХ НАУК ..... 194

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ..... 196
INFORMATION ABOUT THE AUTHORS ..... 197

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ..... 198

Օֆելյա Դարբինյան

# ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

***Հիմնաբառեր.*** սփյուռք, հայրենադար-ձություն, Ներգաղթի կոմիտե, Լիաբանանի հայ համայնք, Բեյրութ, Այնճար, կուսակցություն, եկեղեցի, ՀԲԸՄ, Խորհրդային Հայաստան

*Հայ պատմագրության մեջ Մեծ հայրենադարձությանը նվիրված ուսումնասիրություններում լիբանանահայերի 1946-1947 թթ. հայրենադարձությունը, որի արդյունքներն ու հետևանքները միաժամանակ և՛ ոգևորումի, և՛ հիասթափությունների պատճառ են հանդիսացել, մինչ օրս որևէ հետազոտողի կողմից առանձին քննության թեմա չի հանդիսացել: Սույն հոդվածում, կարևորելով լիբանանահայ համայնքի առանձնահատկությունները, հանրակողմանի լուսաբանվում են այն հիմնական թերացումներն ու բացթողումները, որոնք խոչընդոտ են եղել գործընթացի լիարժեք ու արդյունավետ իրականացմանը: Հստակեցվում է հայրենադարձ լիբանանահայերի տեղաբաշխման աշխարհագրությունը: Անդրադարձ է կատարվում նրանց ինտեգրման խնդիրներին: Զուգահեռաբար վեր են հանվում նաև հայրենադարձների ունեցած ներդրումները Խորհրդային Հայաստանի տնտեսության, ժողովրդագրության, քաղաքաշինության ու գիտամշակութային կյանքի վերելքի գործում: Հետազոտության համար հենքային նշանակություն են ունեցել մի շարք արխիվային փաստաթղթերում և պարբերական մամուլում տեղ գտած տեղեկագրերը, նամակներն ու հրապարակումները, որոնք ենթարկվել են համաբերման և քննական վերլուծության:*

1946-1949 թթ. կազմակերպված հայրենադարձությունը հայ ժողովրդի պատմության կարևորագույն իրադարձություններից մեկն է: ԽՍՀՄ ժողկոմխորհի 1945 թ. նոյեմբերի 21-ի հայրենադարձության մասին որոշման ընդունումից և նույն թվականի դեկտեմբերի 8-ին ՀԽՍՀ ժողկոմխորհին կից Ներգաղթի կոմիտեի, ինչպես նաև դեկտեմբերի 9-ին Վերաբնակեցման վարչության ձևավորումից հետո սփյուռքահայության շրջանում բավականին մեծ թափ ստացավ հայրենիք վերադառնալու ցանկությունը[1]: Ընդ որում՝ այդ ցանկությանը մեծապես նպաստում էր Հայկական հարցի լուծման «ստալինյան տարբերակը», որի համաձայն՝ ԽՍՀՄ-ն այսուհետ Թուրքիայի դեմ հանդես էր գալու հայկական տարածքների պահանջատիրությամբ[2]:

Հայրենադարձների ընդունման և տեղավորման գործընթացների կազմակերպումը սահմանվում էր նաև համապատասխան կանոնադրությամբ: Ընդհանուր առմամբ գործընթացը գործնական հողի վրա է դրվել 1946 թ. փետրվարի 22-ին ԽՍՀՄ ժողկոմխորհի՝ «Արտասահմանից հայերի Սովետական Հայաստան ներգաղթելու պրակտիկ միջոցառումների մասին» որոշման ընդունումից հետո[3]: Նշենք նաև, որ նախատեսվում էր նախապատրաստական «պրակտիկ» միջոցառումներ իրականացնել ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում: Հայաստանում հայրենադարձների ընդունման և աշխատանքի տեղավորման գործում պետք է անմիջական մասնակցություն ունենային

---

* Հոդվածը ներկայացվել է 12.12.2021 թ., գրախոսվել՝ 20.12.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.12.2021 թ.:

[1] *Տե՛ս Մելիքսեթյան Հ. , Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980), Ե., 1985, էջ 178:*

[2] *Տե՛ս Սարգսյան Ն. , Սփյուռքահայերի 1946-1948 թթ. Մեծ հայրենադարձը, Ե., 2014, էջ 29: Խորհրդային կողմն իրականում «օրակարգում» էր դրել ոչ թե ողջ կորսված հայկական տարածքների, այլ միայն Կարսի ու Արդահանի վերադարձի հարցը, տե՛ս Ղանալանյան Տ., Հայկական սփյուռքի պատմության որոշ հիմնախնդիրներ, Ե., 2021, էջ 18-19, տե՛ս նաև «Ազդակ», Բեյրութ, 29. 09. 1946, էջ 1:*

*Հայկական հողերի պահանջատիրությամբ 1940-ական թթ. կեսերին մի շարք սփյուռքահայ համայնքներում ևս կազմակերվել են բազմամարդ հանրահավաքներ, ցույցեր: Նշանակալից է 1945 թ. հուլիսի 29-ին Բեյրութում կազմակերպված հավաքը, որից հետո մասնակիցները Սիրիայի և Լիբանանի հայ ազգային խորհրդի և Խաղ արքեպիսկոպոս Աջապահեանի գլխավորությամբ հանդես են եկել Ստալինին ուղղված հեռագրով: Այս դեպքերի մասին առավել մանրամասն տե՛ս Մելքոնյան Ք. , Հայկական հարցը և սփյուռքահայությունը մինչև ԽՍՀՄ փլուզումը, Ե., 2018, էջ 34-35:*

[3] *Տե՛ս Մելիքսեթյան Հ. , Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, էջ 180-181:*

կուսակցական, խորհրդային, հասարակական բոլոր կազմակերպությունները, կոլտնտեսությունները, ինչպես նաև Հայաստանի ողջ աշխատավոր ժողովուրդը: Հայրենադարձների համար պետք է նոր բնակարաններ կառուցվեին, որին Հայաստանի բոլոր գերատեսչություններն ու մինիստրությունները պարտավոր էին աջակցություն ցուցաբերել: ՀԽՍՀ ժողկոմխորհը պետք է որոշեր հայրենադարձների տեղավորման հնարավորություններն ըստ արդյունաբերական և գյուղատնտեսական շրջանների, իսկ ժողկոմխորհին կից արհեստակցական կոոպերացիայի վարչությունը պետք է հիմներ արհեստանոցներ՝ տնայնագործներին և արհեստավորներին աշխատանքի մեջ ներգրավելու համար[1]:

Ինչ վերաբերում է սփյուռքահայ գաղթօջախներին, ապա այնտեղ ևս անհրաժեշտ էր Ներգաղթի կոմիտեներ ձևավորել, որի անդամ ու ղեկավար կարող էին դառնալ բացառապես տվյալ համայնքի հայկական «առաջադիմական» կառույցների անդամները[2]: Սկզբնական շրջանում, երբ դեռևս խորհրդային ղեկավարությունը նոր էր որոշում կայացրել սփյուռքահայերին հայրենադարձելու մասին, գաղութահայ քաղաքական բոլոր ուժերը՝ կոմունիստները, ռամկավարները, հնչակյանները, դաշնակցականները, կողմ էին արտահայտվել դրան: Բայց հետագայում, երբ սահմանվեց, որ միայն «առաջադիմական» (կոմունիստներ, հնչակյաններ, որոշ չափով նաև ռամկավարներ) կազմակերպությունները կարող են ներգրավվել կատարվելիք աշխատանքների մեջ, դաշնակցական գործիչները փոխեցին իրենց դիրքորոշումը՝ կտրականապես դեմ արտահայտվելով ներգաղթի կազմակերպմանը[3]: Դրան նպաստում էր նաև Խորհրդային Միության կողմից հայկական տարածքային պահանջատիրությունից հրաժարվելու իրողությունը:

Սփյուռքի տեղական կոմիտեները պետք է զբաղվեին ներգաղթել ցանկացողների տվյալների ցուցակագրմամբ՝ հաշվի առնելով նրանց սոցիալական կազմը, մասնագիտությունն ու զբաղմունքը, ինչպես նաև առողջական վիճակը, իսկ հետագայում՝ օժանդակություն ցուցաբերեին տեղափոխության հետ կապված գործերին: Առաջնային էին համարվում նաև սփյուռքահայության շրջանում Խորհրդային Հայաստանի մասին դրական պատկերացումների ձևավորմանն ուղղված քայլերը[4]:

Հայրենադարձության կազմակերպման լուրը լիբանանահայության շրջանում ևս մեծ արձագանք ստացավ: Խորհրդային Հայաստանի՝ Լիբանանի բարեկամների ընկերակցության և Սիրիայի ու Լիբանանի հայ ազգային խորհրդի նախաձեռնությամբ ձևավորվեց «Սիրիայի և Լիբանանի հայերի ներգաղթի կոմիտե», որի պատասխանատու նախագահ նշանակվեց Հրանտ Դևեջյանը[5]: Կոմիտեն պետք է ենթարկվեր Հայաստանում կազմված Կենտրոնական պետական հանձնախմբին[6]: Կատարվելիք աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով որոշվեց կազմավորել նաև տեղական կոմիտեներ[7]: Այսպես, Բեյրութում սեղմ ժամկետներում ստեղծվեց Լիբանանի ներգաղթի կոմիտե, որի գերխնդիրն էր տեղում պատշաճորեն կազմակերպել նախապատրաստական աշխատանքները: Լիբանանի ներգաղթի կոմիտեն 1946 թ. հունվարի վերջին հայտարարություն տարածեց, որ ներգաղթի դիմումներն ու արձանագրությունները ընդունվելու և կազմվելու են նույն թվականի փետրվարի 1-ից, իսկ կենտրոնատեղիներ են լինելու Բեյրութի «Զարեհ-Նուպար», Նոր-Հաճնի «Փիլիպոսեան», Նոր Մարաշ թաղամասի «Երիտասարդական միության» ակումբները, ինչպես նաև Նահրի կամուրջի մոտ գտնվող «Բաղրամեան» ակումբը[8]:

Փետրվարի 16-ին Լիբանանի ներգաղթի կոմիտեն Արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի նախագահին ուղղված նամակով ուշագրավ տվյալ է հաղորդում առ այն, որ «Լիբանանի մէջ մինչեւ հիմա արձանագրված է հայ բնակչութեան իննսուն առ հարիւրը: Արձանագրութիւնները տակաւին վերջ չեն գտած»[9]:

---

[1] *Տե՛ս Սարգսյան Ն. , նշվ. աշխ. ,էջ 67:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 71:*

[3] *Տե՛ս Վիրաբյան Ա. , 1946-1948 թթ. հայրենադարձության հիմնահարցեր և հիմնախնդիրներ // «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրներն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2009, էջ 12:*

[4] *Տե՛ս Սարգսյան Ն. , նշվ. աշխ. , էջ 68:*

[5] *Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 66: Այս մասին տե՛ս նաև գ. 30, թ. 22, գ. 32, թ. 20:*

[6] *Տե՛ս Կարժապետեան Ս., Հայերը Լիբանանի մէջ: Հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Դ, Ֆերլօն, 1983, էջ 152:*

[7] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 66:*

[8] *Տե՛ս «Զարթօնք», Բեյրութ, 30. 01. 1946, էջ 1:*

[9] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 14:*

Ճիշտ է, ներգաղթի նախապատրաստական աշխատանքների մեկնարկից ընդամենը ամիսներ անց նախատեսվում էր գործընթացը գործնականում իրագործել, սակայն կազմակերպող կողմը Ներգաղթի կոմիտեներին որևէ հստակ ժամկետներ չէր տրամադրել[1]: Բացի դրանից՝ լիբանանահայերի պարագայում հաշվի չէին առնվել մի շարք կարևոր խնդիրներ, օրինակ՝ անտեսվել էին անշարժ գույքի վաճառքի, փոխադրական միջոցների տրամադրմանն առնչվող[2], ինչպես նաև ունեցվածքի, այդ թվում՝ և գործիքների ու սարքավորումների Հայաստան տեղափոխելուց հետո դրանց տնօրինման հետ կապված հարցերը[3]:

Արծանագրության ծախսերը, ինչպես նաև ճանապարհածախսը, այդ թվում և պարենի ծախսը[4] հոգալու համար յուրաքանչյուր ընտանիք պարտավոր էր սահմանված չափով վճարումներ կատարել[5]: Բացի դրանից՝ այն մարդիկ, որոնք Դաշնակցության հետ երբևէ ինչ-որ առնչություն էին ունեցել, թեկուզ շատ չնչին, պարտավոր էին կուսակցությունից հրաժարվելու մասին հիմնավոր դիմում գրել՝ նշելով, որ «…պախարակելի է Դաշնակ կուսակցութեան ազգակործան քաղաքական ուղղութիւնը՝ զոր կը վարէ հայ ժողովուրդին հանդեպ»[6]: Նշենք նաև, որ դիմումներ գրելու պահանջի հիմնական պատճառն այն էր, որ Հայաստանում ՀՅԴ գործունեության կասեցումից հետո կուսակցության անդամների մի մասը տեղափոխվել էր Մերձավոր Արևելք, մասնավորապես Լիբանան, և ծավալում էր ակտիվ հասարակական-քաղաքական, կրթամշակութային գործունեություն, որի արդյունքում էլ տեղի հայ համայնքներում բավականին ազդեցիկ դերակատարում էր ստանձնել, ինչը, բնականաբար, հակասում էր խորհրդային քաղաքականությանը: Փաստորեն, հայրենադարձության կազմակերպմամբ նրանք փորձում էին նաև թուլացնել Դաշնակցության արտասահմանյան գործունեությունը:

Նախապատրաստական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Լիբանանում ԽՍՀՄ դեսպան Ռ. Ահարոնովը հանդիպում է ունեցել տեղական կոմիտեի անդամների հետ և մանրամասնորեն ներկայացրել ներգաղթի նրբությունները, ինչպես նաև որոշակի տեղեկություններ հաղորդել ԽՍՀՄ և ՀԽՍՀ սոցիալ-տնտեսական և կրթամշակութային կյանքի մասին[7]:

1946 թ. մարտին Լիբանան են ժամանել ՀԽՍՀ մինիստրների խորհրդի հայրենադարձության կազմակերպման լիազորներ Զ. Չարչյանը և Մ. Կարապետյանը, որոնք պետք է մի շարք ավարտական աշխատանքներ կատարեին: Լիբանանահայերի համար ոգևորիչ էր նաև ՀԽՍՀ արդարադատության նախարար Գառնիկ Նազարյանի Բեյրութ կատարած այցը[8]:

1946 թ. մայիսի 2-ի դրությամբ լիբանանահայության մոտ 90 %-ը ներգաղթելու ցանկություն էր հայտնել [9] : Քանի որ նրանց դիմումներն ընդունվել էին ըստ մասնագիտությունների ու զբաղմունքի, որոշվեց առաջնահերթությունը տալ շինարարներին[10]: Միաժամանակ հայրենիք վերադառնալու մասին լուրը չափազանց մեծ խանդավառությամբ էր ընդունել նաև լիբանանահայ ուսանողությունը: Բավականին տպավորիչ էր Բեյրութի ֆրանսիական և ամերիկյան համալսարանների ուսանողների դիմումները տեղի Ներգաղթի կոմիտեին: Նրանք նշում էին, որ մեծ ուրախությամբ ցանկանում են իրենց ուսումը շարունակել Հայաստանում, մասնավորապես Երևանի պետական համալսարանում[11]: Այսպես, օրինակ, Ամերիկյան համալսարանի 49 ուսանողներ դիմումով իրենց վստահությունն ու սերն էին ներկայացնում հայրենիքի նկատմամբ՝ նշելով, որ «միայն մեր

---

[1] *Տե՛ս նույն տեղում, թ. 29:*

[2] *Հայրենիք վերադառնալ ցանկացող լիբանանահայերը իրենց ունեցվածքը, մասնավորապես անշարժ գույքը չէին կարողանում պատշաճ վաճառել, քանի որ տեղաբնիկ ժողովրդի շրջանում լուրեր էին տարածվել, թե հայերը երկրից հեռանալու են և իրենց գույքը ստիպված են լինելու կա՛մ շատ ցածր գներով վաճառել, կա՛մ էլ ուղղակի լքելու են՝ թողնելով անտերության, տե՛ս նույն տեղում, թ. 26:*

*Լիբանանի ներգաղթի կոմիտեն ֆինանսապես անկարող էր հայրենադարձվել ցանկացողների տեղափոխումն իրականացնել, տե՛ս նույն տեղում, թ. 27:*

[3] *Խոսքը հատկապես վերաբերում է սարքավորումների տնօրինման ու սեփականաշնորհման հարցերին:*

[4] *Տե՛ս նույն տեղում, թ. 72:*

[5] *Տե՛ս «Զարթօնք», Բեյրութ, 30. 01. 1946, էջ 1:*

[6] *Տե՛ս նույն տեղում, 07. 07. 1946, էջ 4:*

[7] *Տե՛ս Սարգսյան Ն. , նշվ. աշխ. , էջ 75-76:*

[8] *Տե՛ս Մելիքսեթյան Հ. , Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, էջ 204-208:*

[9] *Տե՛ս նույն տեղում, էջ 204:*

[10] *Տե՛ս Սարգսյան Ն. , նշվ. աշխ. , էջ 68:*

[11] *Տե՛ս Մելիքսեթյան Հ. , Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, էջ 190:*

հայրենիքին մէջ է որ պիտի կարենանք լավագոյնս զարգացնել մեր կարողութիւնները, որպեսզի մեր ջանքերը միացուցած մեր բախտաւոր եղբայրներուն աշխատանքներուն, հաճույքով և անձնուիրությամբ սատարենք Սովիէթ Հայաստանի մշակութային և գիտական ապագայի կերտումին»[1]:

Հետաքրքրական է նաև նույն համալսարանի բժշկական ֆակուլտետի դասախոս Տ. Բերբերյանի դիմում-նամակը: Ուսումնասիրելով նամակի բովանդակությունը՝ նկատում ենք, որ թեև նա ևս հայրենադարձվելու մեծ ցանկություն է հայտնում, սակայն միևնույն ժամանակ մտահոգաբար է արտահայտվում Հայաստանում իր մասնագիտությամբ աշխատանք գտնելու վերաբերյալ և այդ առթիվ գրում է, որ «կարողիմ հոն (իմա՝ Խորհրդային Հայաստան – Օ.Դ.) գալու յառաջիկայ Ապրիլ ամսւայ միջոցին, եթէ պաշտօնական հրաւեր մը ուղղուի ինձի Երեւանի համալսարանի բժշկական ֆաքուլթեթի ղեքթէրէն...»[2]: Տ. Բերբերյանը նշում է նաև, որ Բեյրութի Ամերիկյան համալսարանում կային նաև ուրիշ մասնագետներ, որոնք ևս «եթե համոզուին թե իրենց պետք կայ և հայրենիքը զիրենք կընդունէ և կառաջնորդէ իրենց կարողութեանց պատրաստութեան և դիրքերուն համապատասխան պաշտօնները, անոնք կարողին զօրացնելու հայրենիքը»[3]:

Լիբանանահայության հայրենիք վերադառնալու մեծ ցանկությունը կապված էր նաև աշխատանք գտնելու հետ, քանի որ Լիբանանի անկախության հռչակումից հետո [4] օտարերկրյա զորքերը դուրս էին հանվել, իսկ հազարավոր հայեր, որոնք ծառայում էին բրիտանական և ֆրանսիական բանակներում, մնացել էին գործազուրկ: Բացի դրանից՝ նրանց շրջանում կար նաև այն մտավախությունը, որ անկախությունից հետո՝ առաջիկայում, տեղական իշխանությունների հոգատարությունը կարող էր վերանալ[5]:

Խորհրդային Հայաստան մեկնելու կապակցությամբ առանձնակի ոգևորություն էր ձևավորվել Այնճարում ապրող հայերի շրջանում: Գլխավոր պատճառն այն էր, որ նրանք 1939 թ. Ալեքսանդրետի սանջակը Թուրքիային բռնակցման և տեղի բնակչության տեղահանման արդյունքում էին այնտեղ հաստատվել և դեռ չէին հասցրել լիովին ինտեգրվել ու հարմարվել նոր միջավայրին[6]: Իսկ ինչ վերաբերում է այնճարահայերի սոցիալ-տնտե-սակայն դրությանը, ապա այն այդքան էլ անմխիթար չէր: Այդ մասին է վկայում 1946 թ. սեպտեմբեր 24-ին թերթի թղթակից Հ. Պուրսալյանի՝ «Ազդակ» օրաթերթում տպագրած «Կյանքը Այնճարի մէջ» խորագրով գրառման հետևյալ տողերը. «Նախանցեալ տարիներուն հետ բաղդատած, այս տարի մեր ժողովուրդի տնտեսական վիճակը կարելի է ըսել, թէ մի քիչ բարւոքած է: Որովհետեւ ցորենի, կորեկի, լուբիայի և այլնի բերքերը կրկնապատկուած են»[7]:

Պատմաբան Հ. Մելիքսեթյանը, անդրադառնալով հայրենադարձությունից առաջ սփյուռքահայ համայնքներում տիրող իրավիճակներին, փորձել է դրանք ընդհանրացնել հունահայ համայնքի օրինակով: Նա գրում է, որ հունահայերը թշվառության մեջ էին գտնվում, զուրկ էին աշխատաքնից, «վաճառում էին իրենց վերջին ունեցվածքը անոթությունից չմեռնելու համար», և նշում, որ «հունահայությունը բացառություն չէր կազմում: Նման ծանր վիճակում էին գտնվում հայերը նաև Իրանում, Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Եթովպիայում, Պաղեստինում, Կիպրոսում և այլուր»[8], և այդ

---

[1] *«Զարթօնք», Բեյրութ, 27. 01. 1946, էջ 1:*

[2] *ՀԱԱ ֆ. 362, ց. 2, գ. 31, թ. 10 և շրջ. :*

[3] *Նույն տեղում, թ. 10:*

[4] *Լիբանանը փաստացի անկախություն է ձեռք բերել 1943 թ, սակայն այն ավելի լիակատար է դարձել 1946 թվականից հետո՝ պայմանավորված օտարերկրյա զորքերի դուրսբերմամբ, տե՛ս Թիությունջյան Պ. , Լիբանանի ժողովրդի ազատագրական պայքարը և հայ համայնքը 1920-1990 թթ. , Ե., 1992, էջ 102:*

[5] *Տե՛ս Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, հ. 2 (1941-2006), Գահիրէ-Փարիզ-Նիւ Եորք, 2006, էջ 298:*

[6] *Տե՛ս Չալըմյան Ն. , Լիբանանի հայ համայնքը երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում, Ե., 2002, էջ 13, 40: Տե՛ս նաև Shemmasian V., The settlement of Musa Dagh armenians in Anjar, Lebanon (1939-1941), «Լիբանանի հայերը (Բ.) Armenians of Lebanon (II)», Edited by A. Dakessian, Beirut, 2017, էջ 130-132: Ալեքսանդրետի սանջակից տեղահանված հայերին մեծապես օգնություն է ցուցաբերել ՀԲԸՄ-ն: Միությունն իր միջոցներով հոգացել է գաղթականների փոխադրության, բնակարանաշինության ու առողջապահության հետ կապված ծախսերը, տե՛ս ՀԱԱ. , ֆ. 362, ց. 2, գ. 30, թ. 55-56:*

[7] *«Ազդակ», Բեյրութ, 24. 09. 1946, էջ 2:*

[8] *Տե՛ս Մելիքսեթյան Հ. , Սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձությունը 1946-1948 թթ. , «Բանբեր Երևանի համալսարանի», 1984, 1, էջ 18:*

վիճակից դուրս գալու միակ ելքն ու փրկություն նա կապում է հայրենադարձության հետ: Մինչդեռ իրականում պատկերն այլ էր հատկապես Սիրիայի[1] ու Լիբանանի դեպքում:

Լիբանանում 1946 թ. դրությամբ բնակվում էր 75-85 հազար հայ[2]: Հայության գերակշիռ մասը կենտրոնացած էր մայրաքաղաք Բեյրութում և նրա մերձակա արվարձաններում[3]: Հա-մայնքը բավականին սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, կրթամշակու-թային ու հոգևոր ակտիվ կյանք էր վարում: Այստեղ էին ազդեցիկ գործունեություն ծավալում հայ քաղաքական երեք կուսակցությունները (Հայ հեղափոխական դաշնակցություն, Սո-ցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն, Ռամկավար-ազատական կուսակցու-թյուն)[4] և երեք եկեղեցիները (հայ առաքելական[5], հայ ավետարանական և հայ կաթոլիկ)[6]:

Այս պայմաններում, գտնում ենք, որ այդքան էլ տեղին չէ Երկրորդ աշխարհամարտի հետևանքով ծանրագույն պայմաններում հայտնված հայ համայքնի դրությունը տարածել նաև մյուս սփյուռքահայ համայնքների, մասնավորաբար Լիբանանի վրա, երբ վերջինս պատերազմից հետո մեծ թվով սփյուռքահայերի համար ապահով ու բարեկեցիկ հանգրվան էր հանդիսանում[7]: Ուստի կարելի է ենթադրել, որ լիբանանահայության Հայաստան վերադառնալու ցանկությունները հիմնականում չէին բխում նյութակենցաղային, քաղաքական, տնտեսական և այլ պայմանների բարելավման նկատառումներից:

Ներգաղթի կազմակերպական աշխատանքներին մեծապես օգնություն է ցուցաբերել Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, որի կենտրոնն այդ ժամանակ գտնվում էր Նյու Յորքում: Միության նախաձեռնությամբ հանգանակություններ էին կազմակերպվում, որոնց արդյունքում խոշոր չափի դրամական միջոցներ էին հավաքվում: Այսպես, 1946 թ. ապրիլից մինչև 1947 թ. հունիս ընկած շրջանում կատարված առաջին հանգանակության արդյունքում նախատեսվածից շատ գումար է հավաքվել՝ 1.413.042 դոլար, որից 91.486 դոլարը տրամադրվել է լիբանանահայերի ներգաղթի կազմակերպման հանձնախմբին: Սակայն 1947 թ. մեկ այլ հանգանակության արդյունքում հավաքված գումարի չափը զգալիորեն զիջում էր նախորդին՝ կազմելով մոտ 551.130 դոլար, իսկ հաջորդող տարիներին, որոշ նկատառումներից ելնելով, գործընթացը դադարեցվել է[8]: Բանն այն է, որ թե՛ Խորհրդային Հայաստանում և թե՛ սփյուռքահայ տարբեր համայնքներում (այդ թվում՝ նաև Լիբանանում) գործող Ներգաղթի կոմիտեները պարբերաբար հեռագրեր էին ուղարկում Միությանը դրամական աջակցություն ստանալու նպատակով[9]: Ստացվում էր այնպես, որ ՀԲԸՄ-ն, նախապես ունեցած պայմանավորվածությունից բացի[10], պետք է էլ ավելի մեծ չափերի դրամական միջոցների տրամադրման պարտավորվածություն ստանձներ:

---

[1] *1946 թ. իրադրությամբ սիրիահայերը համախմբված կերպով կենտրոնացած էին շուրջ 80 բնակավայրերում, զբաղվում էին արհեստներով, առևտրով, հողագործությամբ, վարում էին սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր ու կրթամշակութային ակտիվ կյանք, առավել մանրամասն տե՛ս Չոլաքեան Յ., 1946-1947 թուականներու հայրենադարձութիւնը եւ անոր հետեւանքները սուրիահայ գաղութին վրայ, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2018, թիվ 2, էջ 50-54:*

[2] *Տե՛ս Ղանալանյան Տ., Սփյուռքի ներքին տեղաշարժը 1950-1980-ական թվականներին, Ե., 2016, էջ 87:*

[3] *Տե՛ս Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Դ., էջ 497:*

[4] *Տե՛ս Abramson S., Lebanese Armenians; a Distinctive Community in the Armenian Diaspora and in Lebanese Society, The Levantine Review, Vol. 2, Number 2, p. 208.*

[5] *Այս շրջանում համայնքում հայապահպանությանն ուղղված կարևոր ու արդյունավետ գործունեություն էր ծավալում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը: Վերջինիս առաքելությունը ուղղված էր ոչ միայն հոգևոր, այլ նաև կրթամշակութային կյանքի վերելքին: Կաթողիկոսարանի անմիջական վերահսկողության ու հովանավորության ներքո էին գործում Դպրեվանքը և տարբեր տարքիքի երեխաների համար նախատեսված կիրակնօրյա դպրոցները, տե՛ս Եղիայեան Բ., ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 590-599:*

[6] *Առավել մանրամասն տե՛ս Չալըմյան Ն., նշվ. աշխ., էջ 15, Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Բ, էջ 254-257:*

[7] *Տե՛ս Ղանալանյան Տ., Սփյուռքի ներքին տեղաշարժը 1950-1980-ական թվականներին, էջ 89:*

[8] *Տե՛ս Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միությունը 1946-1948 թթ. հայրենադարձության գործընթացում// «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրներն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2009, էջ 66:*

[9] *Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 362, ց. 2, գ. 30, թ. 59:*

[10] *ՀԲԸՄ-ն նախապես ստանձնել էր 1 մլն դոլարի համազգային հանգանակության պայմանավորվածություն, որը նպատակաուղղված էր լինելու ներգաղթողների ճանապարհածախսերի, Հայաստանում հայրենադարձ կարիքավոր ընտանիքների բնակարանաշինության ծախսերի հոգածությանը, ինչպես նաև առօրյա մի շարք խնդիրների լուծմանը, տե՛ս ՀԱԱ, Ֆ. 362, ց. 2, գ. 30, թ. 16:*

Միության զեկուցագրերից պարզ է դառնում, որ ընդհանուր առմամբ ներգաղթին առնչվող ֆինանսական գործընթացները հարկ եղած ձևով չէին ընթանում: Այդ առթիվ ՀԲԸՄ-ն արել է հետևյալ հայտարարությունը. «Ցաւալի է սակայն տեսնել, որ, երբ Հայաստանի կառաւարութիւնը եւ Ներգաղթի կոմիտէն մեր Միութենէն կակնկալեն առաւելագոյն օժանդակութիւնը, շատ տեղեր անջատ հանգանակութիւններ կը կատարուին, ոչ միայն ներգաղթի, այլ տարբեր նպատակներու համար եւս, ինչ-որ ցոյց կուտայ, թե ոմանք պետք եղած լրջութեամբ հասկացած չեն այս կենսական ձեռնարկին աւագ նշանակութիւնը եւ մանաւանդ ստիպողականութիւնը»[1]:

Չնայած առկա խնդիրներին՝ ՀԲԸՄ-ն 1945-1947 թթ. Հայաստան է ուղարկել ավելի քան 8 միլիոն ռուբլու բեռներ[2], իսկ անցանկալի խնդիրներից զերծ մնալու համար Միությունը Լիբանանի ներգաղթի կոմիտեի պահանջով վճարել է նաև Բեյրութից հայրենիք վերադարձող նավերի վարձը, որի համար նախապես որևէ պարտավորություն չի ունեցել[3]:

Ներգաղթի աշխատանքներին սատարում էին նաև Լիբանանում գործող Հնչակյան կուսակցության անդամները: Ներգաղթողների շրջանում ոգևորությունը բարձրացնելու նպատակով կուսակցության մի շարք երևելի ներկայացուցիչներ, նրանց թվում՝ Հ. Կուժունին, Մ. Սեֆերյանը, Հ. Աղպաշյանը, Բ. Թովմասյանը, Մ. Տեր-Ստեփանյանը, Թ. Ճիռյանը, հանդես են եկել ոգևորիչ ելույթներով[4]:

Հայոց եկեղեցին ևս դրական վերաբերմունք էր ցուցաբերում հայրենադարձության կազմակերպմանը: Կաթողիկոս Գևորգ Զ Չորեքչյանը գրություններ էր ուղարկում Սփյուռքի հայկական եկեղեցական թեմերի առաջնորդներին՝ հորդորելով օժանդակություն ցուցա-բե-րել ներգաղթի կազմակերպմանը[5]: 1946 թ. փետրվարի 13-ին նա հեռագիր է ուղարկում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա-ին՝ գրելով, որ «կը խնդրենք Ձեր լայն եւ ջերմ օժան-դակութիւնը եւ ղեկավարութիւնը գրով եւ գործով, Սիրիոյ եւ Լիբանանի հայութեան ներգաղ-թը կազմակերպելու համար» [6] : Չնայած Հայոց կաթողիկոսի այս հեռագրին՝ իրականում պե-տական պաշտոնական ոչ մի հրամանագիր չկար, որը թույլ կտար արտասահ-մանում ներ-գաղթի նախապատրաստական աշխատանքների ղեկավարումն իրականացնել տեղի ազ-գային կառույցների, այդ թվում՝ նաև տեղի հայ եկեղեցու կողմից: Այդ մասին դեռևս 1945 թ. դեկտեմբերի 25-ին վկայում էր նաև Հայաստանի Ներգաղթի կոմիտեի ղեկավարության Լի-բանան ուղարկված գրությունն առ այն, որ «հրահանգ տուած է Լիբանանի մէջ Հայաստանի բարեկամներու նախագահ Տիար Հ. Տէվէճեանին անմիջապես գործի ձեռնարկելով կազմե-լու Ներգաղթի յանձնախումբ մը, արտասահմանում գործող հայկական բոլոր յառաջադի-մական եւ բարեգործական կազմակերպութիւնների ղեկավար անձերից, ստանձնելու հա-մար ներգաղթի հետ կապ ունեցող բոլոր խնդիրների լուծումը»[7]: Իսկ 1946 թ. մայիսին Գևորգ Զ-ի կողմից ուղարկված շրջաբերականը Գարեգին Ա-ին ցույց է տալիս, որ վերջինիս գոր-ծունեությունը պետք է սահմանափակվեր միայն բարոյական աջակցությամբ: Թեև Կիլիկիո կաթողիկոսը լավ էր գիտակցում խորհրդային ղեկավարության նմանօրինակ դիրքորոշումը, այնուամենայնիվ, չունենալով ներգաղթի կազմակերպման անմիջական ղեկավարության իրավունք, ցուցաբերել է նաև նյութական աջակցություն և 1945 թ. դեկտեմբերի 30-ից սկսած հանգանակություն է կազմակերպել, որի արդյունքում Ներգաղթի կոմիտեին է փոխանցել 32 հազար լիբանանյան լիրա[8]: Նշենք նաև, որ Ամենայն հայոց կաթողիկոսն իր դրական դիրքո-րոշման մասին հաճախ անդրադառնում էր նաև «Էջմիածին» պարբերականում:

Լիբանանահայության ներգաղթը կազմակերպվում է մի քանի փուլերով՝ ընդգրկելով 1946-1947 թվականները: Թեև 1948 թ. դրությամբ դեռևս աշխատանքներ էին տարվում հայ-րենադարձության կազմակերպման շուրջ, և Լիբանանից ու Սիրիայից բազմաթիվ հայեր հայ-րենիք վերադառնալու ցանկություն էին հայտնում, այնուամենայնիվ որոշ խնդիրների

---

[1] *ՀԱԱ, Ֆ. 362, ց. 2. , գ. 30, թ. 60:*

[2] *Տե՛ս Սարգսյան Ն. , նշվ. աշխ. , էջ 171:*

[3] *Տե՛ս Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, հ. 2, էջ 307-308:*

[4] *Տե՛ս «Արարատ», 18. 10. 1947 թ. , էջ 1:*

[5] *Տե՛ս Մելիքսեթյան Հ. , Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, էջ 187:*

[6] *Եղիայեան Բ. , նշվ. աշխ. , էջ 607:*

[7] *Նույն տեղում, էջ 608:*

[8] *Տե՛ս նույն տեղում, էջ 607:*

առաջացման պատճառով մի շարք երկրներից, այդ թվում՝ նաև Լիբանանից, դադարեցվում է գործընթացը[1]:

1946 թ. Բեյրութից Հայաստան է ժամանել ութ քարավան: Առաջին քարավանը 1946 թ. հունիսի 23-ին դուրս է եկել Բեյրութ նավահանգստից «Տրանսիլվանիա» շոգենավով՝ իր հետ բերելով 1806 մարդ[2]: Հուլիսին երկրորդ և երրորդ քարավաններն են հայրենիք վերադարձել: Երկրորդ քարավանը՝ թվով 1800 մարդ, դուրս է եկել հուլիսի 10-ին կրկին «Տրանսիլվանիա» նավով, իսկ երրորդը՝ թվով 2300 մարդ՝ հուլիսի 12-ին «Ռոսիա» նավով[3]: Մեկնողների տրամադրությունը բավականին բարձր էր: Նշենք նաև, որ Բեյրութ նավահանգստում էին գտնվում Գարեգին Ա կաթողիկոսը և մի քանի վարդապետներ, որոնք իրենց բարեմաղթություն և օրհնություն էին հայտնում: Նույնիսկ կազմակերպում էին մատաղի արարողություն, ինչն ավելի շատ էր ոգևորում հայրենադարձներին[4]:

Օգոստոսի 11-ին չորրորդ քարավանն է հայրենիք մեկնել «Պոբեդա» նավով (թվով 1030 մարդ): Սեպտեմբերին Բեյրութից երեք քարավան է մեկնել Բաթում. սեպտեմբերի 13-ին հինգերորդ քարավանը՝ թվով 2417 մարդ «Մոլոտով» շոգենավով, սեպտեմբերի 16-ին վեցերորդ քարավանը՝ թվով 2720 մարդ «Տրանսիլվանիա» շոգենավով, իսկ սեպտեմբերի 27-ին՝ 6000 մարդ «Ռոսիա» նավով[5]: 1946 թ. վերջին ութերորդ քարավանը՝ թվով 1200 մարդ, մեկնել է հոկտեմբերի սկզբներին «Շքոթքա» նավով[6]: Քարավանների նշված թվական տվյալները վերաբերում են Լիբանանից ու Սիրիայից հայրենադարձվողներին, քանի որ թե՛ լիբանանահայերը և թե՛ սիրիահայերը կենտրոնանում էին Բեյրութ նավահանգստում, ուստի նրանց տարանջատելու հետ կապված դժվարություններ էին առաջանում: Այնուամենայնիվ, նշված տվյալների օգնությամբ պատկերացում ենք կազմում լիբանանահայության տեղաշարժի մասին: Այսպիսով, 1946 թվականի համար Սիրիայից ու Լիբանանից նախատեսված 4950 մարդու փոխարեն[7] Հայաստան է տեղափոխվել 19.273 մարդ[8]:

Ինչ վերաբերում է 1947 թ. հայրենադարձությանը, ապա Լիբանանից ներգաղթողների թիվը հստակ հայտնի է: Այդ տարի Բեյրութից «Պոբեդա» նավով Հայաստան է մեկնել հինգ քարավան: Ներգաղթը սկսվել է հուլիսի 4-ից, և այդ տարվա առաջին հայրենադարձների հետ Լիբանանից Հայաստան է մեկնել 474 ընտանիք կամ 2538 մարդ[9]: Հուլիսին ևս մեկ քարավան է հայրենիք վերադարձել՝ իր հետ բերելով 125 լիբանանահայ: Օգոստոսի 11-ին երրորդ քարավանով 2113 լիբանանահայ է վերադարձել: Ներգաղթը շարունակվել է նաև սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին: Սեպտեմբերի 11-ին չորրորդ քարավանով հայրենիք են վերադարձել 70 ընտանիք կամ 353 մարդ[10] (հայրենադարձները հիմնականում բեյրութաբնակ արհեստավորներն էին[11]), իսկ հոկտեմբերի 25-ին՝ 1011 լիբանանահայեր[12]: Այսպիսով, 1947 թ. նախատեսված 15.000 մարդու փոխարեն (այդ թվում՝ նաև Սիրիայից,

---

[1] *Տե՛ս Սարգսյան Հ., Հայրենադարձության աշխարհագրությունը և ժողովրդագրությունը // «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրներն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, էջ 59:*

[2] *Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, էջ 211:*

[3] *Տե՛ս «Էջմիածին», 1946 թ. հունիս-հուլիս, էջ 90:*

[4] *Տե՛ս Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Դ, էջ 153-154:*

[5] *Տե՛ս «Էջմիածին», օգոստոս-հոկտեմբեր, 1946, էջ 90-92:*

[6] *Տե՛ս «Զարթօնք», Բեյրութ, 04. 10. 1946, էջ 1:*

[7] *Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, էջ 203:*

[8] *Հ. Մելիքսեթյանի կատարած հաշվարկի համաձայն՝ 1946 թ. Սիրիայից ու Լիբանանից Հայաստան վերադարձած հայերի թիվը կազմում է 19. 253, տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, էջ 241:*

[9] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 362, ց. 16, գ. 22, թ. 3-15: Հայաստան ներգաղթած ընտանիքներից 114-ին տեղաբաշխում են Երևանում, մասնավորապես Արաբկիր վարչական շրջանում, 53-ին՝ Լենինականում (այժմ՝ Գյումրի), 37-ին՝ Կիրովականում (այժմ՝ Վանաձոր), 31-ին՝ Վեդիում, 12-ին՝ Հոկտեմբերյանում (այժմ՝ Արմավիր), 20-ին՝ Արթիկում, 25-ին Բերիայում, 61-ին՝ Էջմիածինում, 33-ին Աշտարակում, 43-ին՝ Կոտայքում, 1 ընտանիքի՝ Նոյեմբերյանում, 44-ին՝ Արտաշատում:*

[10] *Տե՛ս նույն տեղում, գ., 25, թ. 8-32: Ընտանիքներին տեղավորել են Երևանում, տե՛ս նույն տեղում:*

[11] *Տե՛ս նույն տեղում, գ. 88, թ. 7-275: Հայրենադարձները հաստատվել են Երևանում, Վանաձորում և Էջմիածնում, տե՛ս նույն տեղում:*

[12] *Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, էջ 230:*

Իրաքից, Պաղեստինից, Կիպրոսից)[1] Հայաստան է վերադարձել ավելի քան 15.000 մարդ[2], որից միայն լիբանանահայերը կազմում էին 6140[3]:

Քարավաններին Բաթում նավահանգստում դիմավորում էին Արտասահմանի հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի նախագահի Բ. Աստվածատրյանը[4], նրա տեղակալ Հ. Մարջանյանը և ներքին գործերի նախարարի տեղակալ Ակոբովը[5]: Մինչև Հայաստան մեկնելը հայրենադարձներին նախ ժամանակավոր տեղավորում էին ընդունման կետերում, որտեղ նրանց երկար ու ստորացուցիչ հարցաքննության ենթարկելուց հետո բեռնատար վագոններով տեղափոխում էին Հայաստանի այս կամ այն շրջանը: Այսպիսով, 1946-1947 թթ. Լիբանանից Հայաստան են ներգաղթել հիմնականում Այնճարի, Բեյրութի և Տրիպոլիի շրջանի հայությունը: Այնճարից եկած հայերին տեղավորել են Բերիայի շրջանում[6], Էջմիածնում, Հոկտեմբերյանում (այժմ՝ Արմավիր), Վեդիում, Զանգիբասարում (այժմ՝ Մասիս)[7], Նոր Բայազեդում (այժմ՝ Գավառ), Բասարգեչարում (այժմ՝ Վարդենիս), Դիլիջանում, Բեյրութից եկածներին՝ Երևանում, Լենինականում (այժմ՝ Գյումրի), Կիրովականում (այժմ՝ Վանաձոր), Ալավերդիում, Ստեփանավանում, Արտաշատում, Վեդիում, Դիլիջանում, Սևանում, Գորիսում, Ղափանում (այժմ՝ Կապան)[8], իսկ Տրիպոլիից եկածներին՝ Երևանում, Վեդիում, Գորիսում, Ղափանում, Սևանում, Կրասնոսելսկում (այժմ՝ Ճամբարակ)[9]:

Թեև նախապես կատարված ցուցակագրությունների համաձայն լիբանանահայ արհեստ-տավորների, շինարարների, արվեստագետների և ուսուցիչների մեծ մասը հաստատվում էր քաղաքային շրջաններում, իսկ հողագործներն ու այգեգործները՝ գյուղական բնակա-վայրում[10], սակայն երբեմն ստացվում էր այնպես, որ արհեստավոր մարդը հայտնվում էր գյուղում, իսկ հողագործը՝ քաղաքում: Դրան գումարվում էին նաև նյութակենցաղային, բնա-կարանային անմխիթար պայմանները: Որոշ ընտանիքներ նույնիսկ ստիպված էին լինում բաց երկնքի տակ ապրել: Լինում էին դեպքեր, երբ բնակարանով և աշխատանքով ապա-հովելը ընթանում էր կարիքավոր տեղացիների հաշվին, որի հետևանքով սրվում էին սփյուռքահայերի և տեղացիների հարաբերությունները[11]: Առաջացած խնդիրների մասին թեպետ շրջաններն առանձին-առանձին զեկուցագրեր էին կազմում և ուղարկում ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ Ա. Փիրուզյանին, սակայն շատ ժամանակ դրանք անպատասխան էին մնում[12]: Լինում էին նաև այնպիսի դեպքեր, երբ հենց շրջանների ու տեղամասերի ղեկավարներն էին հայրենադարձների նկատմամբ անհարգալից վերաբեր-մունք ցուցաբերում[13]: Չնայած այդ

---

[1] *Տե՛ս Ղանալանյան Տ., 1946-1948թթ. հայրենադարձության արդյունքներն ու հետևանքները //Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված հոդվածների ժողովածու, Ե., 2013, էջ 121:*

[2] *Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 362, ց. 2, գ. 38, թ. 63:*

[3] *1947 թ. Սիրիայից հայրենադարձվել է 6845 մարդ, Իրաքից՝ 856, Պաղեստինից՝ 1260, տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, էջ 241:*

[4] *Տե՛ս «Զարթօնք», Բեյրութ, 03. 08. 1947, էջ 1:*

[5] *Տե՛ս նույն տեղում, 17. 07. 1946, էջ 1:*

[6] *Ներկայումս շրջանի տեղում գտնվում են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի Հաղթանակ թաղամասը, Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների թաղամասերը: Բերիայի շրջանը կազմավորվել է Խորհրդային Հայաստանի իշխանությունների՝ 1939 թ. ամռանը կայացրած որոշման համաձայն: 1940-1953 թթ. այն կոչվել է Բերիայի, իսկ 1953 թվականից հետո՝ Շահումյանի շրջան, որը 1958-1959 թթ. միացվել է քաղաքամայր Երևանին, տե՛ս Սուքիասյան Հ., Խորհրդահայ գյուղի առօրյան Հայրենական մեծ պատերազմի տարիներին (Դալմայի բնակավայրի օրինակով), // Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին և Վանաձորի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին, Ե., 2019, էջ 308-309, 313, տե՛ս նաև https://yhm.am/archives/8903 (դիտումը՝ 02. 09. 2021):*

[7] *Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 362, ց. 16, գ. 22 թ., 9-15, նույն տեղում, գ. 85, թ. 20-176:*

[8] *Տե՛ս նույն տեղում, գ. 85, թ. 1-70, գ. 86, թ. 10-176, գ. 89, թ. 32, 36-37, 97:*

[9] *Տե՛ս նույն տեղում, գ. 86, թ. 57, 81, 140, 160-161, գ. 87, թ. 22:*

[10] *Հայրենադարձ լիբանանահայերի տեղաբաշխման ցուցակներն ըստ մասնագիտությունների մանրամասն տե՛ս նույն տեղում գ. 22, գ., 25, գ. 85-89:*

[11] *Առավել մանրամասն տե՛ս Ստեփանյան Ա., 1946-1948 թթ հայրենադարձության ինտեգրման և առապտացման խնդիրը, 1946-1948 թթ. հայրենադարձության հիմնահարցեր և հիմնախնդիրներ// «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրներն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2009, էջ 154-156:*

[12] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 362, ց. 2., գ. 38, թ. 170:*

[13] *Տե՛ս նույն տեղում:*

ամենին՝ կային նաև այնպիսի վայրեր, որտեղ հայրենա-դարձները համեմատաբար բարվոք պայմաններում էին հայտնվել, ինչպես, օրինակ, Վանաձորում հաստատվածները[1]:

Ներգաղթողների համար անսովոր էր նաև մասնավոր սեփականություն չունենալու հանգամանքը: Նրանց մի մասն իրենց հետ տարբեր աշխատանքային գործիքներ ու սարքավորումներ էին բերել, որոնց պետականացումը ևս հուսալքություն էր առաջացնում, ընդ որում՝ այն կատարվում էր Բաթում նավահանգիստ հասնելուն պես[2]: Բնական է, որ այդ ամենը հիասթափությունների պատճառ էր հանդիսանալու, քանի որ խորհրդային ղեկավարությունը չուներ ինտեգրման գործընթացի կազմակերպման հստակ մշակված քաղաքականություն: Մյուս կողմից էլ իշխող վարչակարգի կողմից ձևավորած վախի ու սարսափի մթնոլորտն էր լուրջ խոչընդոտներ առաջացնում:

Բացի վերոնշյալ խնդիրներից՝ կար նաև լեզվի կիրառության հարցը, որը ևս մի շարք խոչընդոտների էր հանգեցնում: Ընդհանուր առմամբ լիբանանահայերը, մասնավորապես բեյրութահայերը, կիրթ էին[3], սակայն նրանց շրջանում կային նաև արևմտահայերենին լավ չտիրապետողներ, որոնք խոսում էին տարբեր բարբառներով կամ էլ թրքախոս էին[4]:

Խորհրդային ղեկավարությունը որոշակի քայլեր էր ձեռնարկում լեզվական խնդիրները կարգավորելու հարցում: Այդ նպատակով նրա վերահսկողությամբ ստեղծվեց «Անգրագիտութեան վերացման խմբակ», որը հիմնականում նպատակաուղղված էր հայերենի ուսուցմանը: Խմբակի անդամակցությունը առանց տարիքային սահմանափակման էր: Օրինակ՝ հայտնի է, որ այդտեղ էր հաճախում 43 տարեկան լիբանանահայ Անդրանիկ Փամբուխյանը, որի նախկին խոսակցական լեզուն եղել էր թուրքերենը[5]: Սակայն դասընթացները կազմակերպվում էին արևելահայերենով, իսկ բովանդակային առումով բավականին ծանրալի էին: Արդյունքում մասնակիցները որևէ էական հաջողություններ չէին գրանցում: Բացի դրանից՝ Խորհրդային Հայաստանում մեծապես կարևորվում էր նաև ռուսերենի իմացությունը, որը լիբանանահայության շրջանում բավականին ցածր շեմի վրա էր[6]:

Հայաստանում առկա խնդիրների պայմաններում որոշ հայրենադարձներ դիմեցին ծայրահեղ քայլերի: Քանի որ կամավորության սկզբունքով ոչ մի հնարավորություն չկար հետ գնալու, ուստի նրանց մի մասը փորձում էր սահմանահատման միջոցով փախուստի դիմել: Ընդհանուր առմամբ այդ քայլը փրկության միջոց չէր, քանի որ ոչ բոլորին էր հաջողվում սահմանն անցնել: Սահմանազանցներից շատերը կարճ ժամանակա-հատվածում ձերբակալվում էին: Մատնությունների միջոցով ձերբակալվում էին նույնիսկ նրանք, ովքեր ընդամենը մի քանի բառով էին իրենց դժգոհությունն արտահայտել իշխող վարչակարգի մասին: Թեև վերջինիս կողմից միջոցառումների նոր ծրագիր ընդունվեց հայրենադարձների աշխատանքային, բնակարանային, նյութակենցաղային հարցերի կարգավորման մասին[7], այնուամենայնիվ գործնականում դա այնքան էլ նկատելի չէր դառնում: Ընդհակառակը, 1948 թ. դրությամբ իրավիճակն այնպես էր սրվել, որ լիբանանահայերից մեկի սահմանազանցման պահին նույնիսկ տեղի է ունեցել փոխհրաձգություն[8]:

1948 թ. հունիսի 2-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ ձերբակալված հայրենադարձները պետք է աքսորի ենթարկվեին: Սակայն նրանց մեծ մասը Հայաստանից աքսորվեց 1949 թ. համընդհանուր աքսորի ժամանակ[9]: Ձերբակալվածներին հիմնականում մեղադրում էին Դաշնակցության հետ գործակցելու մեջ[10], ինչպես նաև անգլիական ու

---

[1] *Տե՛ս նույն տեղում, թ. 195:*

[2] *Տե՛ս Ստեփանյան Ա., 1946-1948 թթ հայրենադարձության ինտեգրման և ադապտացման խնդիրը, էջ 157-158:*

[3] *Տե՛ս Ստեփանյան Ա., XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Ե., 2010, էջ 198:*

[4] *Լիբանանահայերի գերակշիռ մասը 1920-ական թթ. Կիլիկիայի ջարդերից փրկվածներն էին, որոնք մինչև գաղթական դառնալը օսմանյան հարկադիր քաղաքականության արդյունքում թրքախոս էին դարձել, տե՛ս նույն տեղում, էջ 191:*

[5] *Տե՛ս «Արարատ», Բեյրութ, 18. 09. 1947, էջ 2:*

[6] *Տե՛ս Սուքիասյան Հ., Ղազարյան Գ., Խորհրդային Հայաստանում հայրենադարձների տեղավորման և ինտեգրման գործընթացի պատմությունից (1946-1948 թթ.), «Պատմություն և քաղաքականություն. կեղծարարությունն, ֆոբիա, առասպելաստեղծություն», Ստեփանակերտ, 2020, էջ 163:*

*Լիբանանահայերը ռուսերենին վատ էին տիրապետում, քանի որ Լիբանանում որպես օտար լեզու այն տարածում չի ունեցել, ինչպես, օրինակ, ֆրանսերենն ու անգլերենը:*

[7] *Տե՛ս Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 15:*

[8] *Տե՛ս Սարգսյան Ն., նշվ. աշխ., 153:*

[9] *Տե՛ս նույն տեղում, էջ 151-152:*

[10] *Տե՛ս Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, հ. 2, էջ 311:*

ֆրանսիական բանակներին ծառայելու համար: Սակայն իրականում այդ մեղադրանքն ավելի շատ քողարկում էր խորհրդային կարգերի ստանձնած թերի քաղաքականությունը: Կարելի է ասել, որ 1948-1949 թթ. առաջացած խնդիրների պատճառով դադարեցվեց հայերի ներգաղթը, որը տվյալ պայմաններում կարևոր որոշում էր: Միաժամանակ պետք է նշենք, որ ներգաղթը ուներ նաև դրական կողմեր, քանի որ հայրենադարձները մեծ ավանդ ունեցան հայրենիքի զարգացման ու շենացման գործում: Լիբանանահայության դեպքում նշանակալից է Հայաստանում գործարաններ հիմնելու, Երևանի Նոր Զեյթուն թաղամասը կառուցելու նպատակով ցուցաբերած աջակցությունը: Հատկանշական է նաև Լիբանանից բերված աշխարհահռչակ գծանկարիչ ու փորագրական գեղանկարչության հայ վարպետ Էդգար Շահինի օֆորտների հավաքածուն, որը նվիրվեց Հայաստանի ազգային պատկերասրահին[1]:

Այսպիսով, կատարված հետազոտության արդյունքում գալիս ենք հետևյալ եզրահանգումներին.

- ✓ Հետպատերազմյան ծանր ու անկայուն շրջանում, որքան էլ աշխատող ուժի պակաս էր զգացվում, նման մասշտաբի ծրագրի իրականացումը արդյունավետ չէր, քանի որ նախ համապատասխան ռեսուրսներ ու միջոցներ չկային, և հետո պետության ողջ ջանքերն առաջին հերթին պետք է ուղղված լինեին երկրի ներսում կայունության հաստատմանն ու ապահովմանը, ինչպես նաև սոցիալական պայմանների բարելավմանը:
- ✓ Հայրենադարձությանն ուղղված նախագծերի կազմումն ու նախապատրաստական աշխատանքների իրականացումը տարիների ջանք ու եռանդ էին պահանջում, ինչը տվյալ դեպքում բացակայում էր:
- ✓ Հայրենադարձության հետևանքով հայաթափվեցին Սփյուռքի ամենակենսունակ համայնքի հայաշատ կենտրոնները՝ Բեյրութը, Այնճարը, Տրիպոլին, որոնք հետագայում հիմնականում բնակեցվեցին մուսուլմաններով՝ ուժացման լուրջ սպառնալիքներ ստեղծելով տեղերում մնացած հայերի համար:
- ✓ Հայրենադարձ լիբանանահայերի ինտեգրման խնդիրները հիմնականում բխում էին հետևյալ հանգամանքներից.

  ա. Հայրենիքում առկա իրականությունը չէր համապատասխանում իրենց պատկերացումներին, որոնք ձևավորվել էին խորհրդային կողմի՝ Լիբանանում նախապես կազմակերպված քարոզչական աշխատանքների արդյունքում: Դրան գումարվում էր նաև Հայաստանի իշխանությունների և տեղացիների կողմից ցուցաբերված անբարյացակամ վերաբերմունքը, որը բարոյահոգեբանական առումով ծանր հարված էր:

  բ. Լիբանանահայերը չէին տիրապետում արևելահայերենին ու ռուսերենին:

  գ. Մեծամասշտաբ ներգաղթի հետևանքով խիստ սահմանափակվել էին աշխատատեղերը: Արդյունքում աճել էր գործազրկությունը:

  դ. Լիբանանահայերը տեղական իշխանությունների կողմից խիստ վերահսկողության էին ենթարկվում, քանի որ կասկածվում էին Դաշնակցության կամ եվրոպական երկրների հետ գործակցելու մեջ:
- ✓ Լիբանանում ներգաղթի կազմակերպչական հարցերի ղեկավարումը ավելի արդյունավետ կլիներ հանձնարարել տեղի հայ ազգային կառույցներին՝ կարևորելով վերջիններիս և Հայաստանի ներգաղթի կոմիտեի միջև ամուր կապի հաստատումը:
- ✓ Այդուհանդերձ, լիբանանահայերի հայրենադարձությունն ունեցավ նաև դրական արդյունքներ ու հետևանքներ: Նախ հայրենադարձների ներդրումը մեծ էր հետպատերազմյան Հայաստանի տնտեսության, ժողովրդագրության, քաղաքաշինության, ինչպես նաև գիտամշակութային կյանքի վերելքի գործում: Եվ հետո խորհրդային կողմի վարած քաղաքականության արդյունքում օտարախոս կամ կրթություն չստացած լիբանանահայերը վերջնականապես դարձան հայախոս ու կիրթ, ինչն էլ հետագայում նպաստեց ինտեգրման հետ կապված խնդիրների հաղթահարմանը:

*Ներկայումս մերձավորարևելյան տարածաշրջանը, գտնվելով լարված ու անկայուն իրադրության մեջ, բավականին սպառնալից բարդությունների ու դժվարությունների առաջ է կանգնեցրել տեղի հայ համայնքներին, այդ թվում՝ նաև երբեմնի հայապահպանության*

[1] *Առավել մանրամասն տե՛ս «Ազդակ», Բեյրութ, 14. 01. 2016, էջ 6, նաև Սարգսյան Ն. , նշվ. աշխ. , էջ 174-180:*

*լավագույն օջախ Լիբանանի հայ համայնքին: Օրեցօր հարաճող խնդիրները (համավարակ, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական) համայնքի հայության համար երկրից արտագաղթելու լրջագույն պատճառներ են: Այս պայմաններում աճում են հայրենադարձության կազմակերպման հավանականությունն ու առաջնահերթությունը: Ուստի գտնում ենք, որ նախորդ դարաշրջանում կազմակերպված հայենադարձության հետազոտությունը, թույլատրված բացթողումների, սխալների ուսումնասիրությունը, ինչպես նաև դրական արդյունքների ու հետևանքների վերհանումը մեր օրերում էլ ավելի այժմեական ու կարևոր խնդիրներ են:*

***Офелия Дарбинян, ОСОБЕННОСТИ РЕПАРТАЦИИ ЛИВИНСКИХ АРМЯН, РЕЗУЛЬТАТЫ И ПОСЛЕДСТВИЯ (1946-1949 ГГ.).*** В исследованиях, посвященных Великой репатриации в армянской историографии, репатриация ливанских армян в 1946-1947 годах, результаты и последствия которой одновременно вызвали вдохновение и разочарование, еще не была предметом отдельного исследования ни одним исследователем. В этой статье рассказывается об армянской общине ливана, всесторонне освещаются основные недостатки и упущения, которые стали препятствием для полноценной и эффективной реализации процесса. Уточняется география размещения репатриированных ливанских армян. Решаются вопросы их интеграции. В то же время подчеркивается вклад репатриантов в рост экономики, демографии, городского развития, научной и культурной жизни Советской Армении. Исследование было основано на ряде архивных документов, в том числе периодических изданий, писем и публикаций в периодической печати, которые были подвергнуты сравнению и изучению.

***Ключевые слова:*** *диаспора, репатриация, комитет по иммиграции, Ливанская армянская община, Бейрут, Айнчар, партия, церковь, АВБС, Советская Армения.*

***Ofelya Darbinyan, PECULIARITIES, RESULTS AND CONSEQUENCES OF THE REPATRIATION OF THE LEBANESE-ARMENIANS (1946-1949).*** In the studies devoted to the Great Repatriation in Armenian historiography, the repatriation of Lebanese-Armenians in 1946-1947, the results and consequences of which simultaneously caused inspiration and disappointment, has not yet been the subject of a separate investigation by any researcher. So far, it has not been the subject of a separate study. This article, giving an importance to the peculiarities of the Lebanese-Armenian community, comprehensively highlights the main shortcomings and omissions that have become an obstacle to the full and effective implementation of the process. The geography of the placement of repatriated Lebanese-Armenians is being clarified. In parallel, the contributions of repatriates to the economy, demography, urban planning and scientific and cultural life of Soviet Armenia are also put forward. The bulletins, letters and publications in a number of archival documents and periodicals, which were gathered up and analyzed, were of primary importance for the research.

***Keywords:*** *Diaspora, repatriation, Immigration Committee, Armenian Community of Lebanon, Beirut, Anjar, party, church, AGBU, Soviet Armenia.*

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

*ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ*

# ИСТОРИЯ И КУЛЬТУРА

*АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ*

# HISTORY AND CULTURE

*JOURNAL OF ARMENIAN STUDIES*


## 2021, № 2

**Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան**

**Խմբագիր՝ Միքայել Մալխասյան**

**Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան**
**Սրբագրումը՝ Մերի Հովհաննիսյանի**
**Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի**

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

**Տպաքանակը՝ 300**